

Համաժողովն այդ նպատակով Վորմսուժ հիմնեց «Ս. զատ միութիւն դերմանական աւետարանական սինոդականները (Verband): ժողովականներն իրենց հայեացքները եկեղեցական այլ (անդիւնները) մասին ձեռակերպեցին առանձին դեկլարամբը:

Ա. ՀԱՌՆԱԿ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻԻՒՆՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻԻՒՆԸ *)

Չկայ իրիւթիւն ոչ մի այլ անձի մէջ, չի՛ արուած նաև ոչ մի այլ անուն, որով մենք երջանիկ լինել կարողանայինք՝ բայց թէ Յիսուս Քրիստոսի անունը **)—այս է քրիստոնէական եկեղեցու դաւանանքը:

Այս դաւանանքով է սկսել նա իւր դոյութիւնը, յանուն այս դաւանանքի են մեռել իւր նահատակները, և դեռ այսօր էլ, ինչպէս և տասն և ութ դար առաջ, այս դաւանանքից է բխում իւր ոյժը: Կրօնի ողջ բովանդակութիւնը, կեանք Աստուծոյ մէջ, թողութիւն մեղաց, մխիթարութիւն վշակ միջոցին, նա կապում է այս անձի հետ: Աորանով նա միացնում է այն, ինչ որ կեանքին բովանդակութիւն ու յարատեւութիւն է տալիս, այն՝ հէնց ինքը՝ յաւիտենականը մի բանի հետ, որ պատմական է, և պնդում, թէ այս երկուսին շաղկապող միութիւնն անբաժանելի է:

Հաստատուն է արդեօք մի այսպիսի յարակցութիւն, կարո՞ղ է նա դիմանալ որո՞ճացող մտքի վտրձին: Այն ամենն, ինչ որ պատմական է, թուում է թէ մի անընդհատ դառնալ-գոյանալ ու անցնել-չբանալ է: Մի՞թէ կարելի է ուրեմն մի երևոյթ պատմութեան շարքից դուրս քաշել և նորան ընծայել յաւիտենականութեան ամբողջ կշիւը, այն էլ անցեալին պատկանող մի երևոյթի: Եթէ այն անձը գոնէ դեռ ևս մեր մէջ լինէր, թերևս կարելի էր այլ բան ասել: Բայց շատ ու շատ դարեր և մի խճճուած աւանդութիւն պարսպի պէս կանգնած

*) Das Christentum und die Geschichte, D. Adolf Harnack, Reden und Aufsätze 1904 II Band, SS. 3—21.

**) Հմմտ. Գործք Առաքելոց Դ 12.

են նորա և մեր մէջ: Եւ սակայն մենք պէտք է ձեռքից բաց չթողնենք այդ անձնաւորութիւնը, նորան ամուր բռնած պահենք, ինչպէս եթէ նա յաւիտեանս ներկայ լինէր, և նորան մեր կեանքի վէժ պիտի խօստովանենք: Հնարաւոր է այս լաւ է այս: Այս հարցն զբաղեցրել է ամեն փամանակի մտածող քրիստոնեաներին և ընկզբիւմ է քրիստոնէական կրօնի էութեան և գոյութեան իրաւունքի ամենակարեւոր խնդիրները՝ քրիստոնէութիւնն ու պատմութիւնը: Միմիայն այս կարող է լինել իմ նպատակն այս թատրոնի փամին, սոյն խնդրի իմաստն ու լրջութիւնը լուսաբանել և մի քանի հայեցակէտներ առաջարկել իւր կշռադատութեան համար:

Մի միթիւտարական իրողութեամբ կարող եմ ես սկսել: Այն մեծ յարձակումը, որ տասնևութերորդ դարն ուղղել էր կրօնի ու պատմութեան առնչութեան դէմ, այսօր յաղթահարուած յետ է մղուած: Այս յարձակման ամենաբնորոշ արտայայտութիւնն է Աեստինգի հետեւեալ խօսքը. «Ասամական պատահական ճշմարտութիւններն երբէք չեն կարող բանակասութիւնից անհրաժեշտ կերպով բղխող ճշմարտութեան ասպնցոյցներն ոյժ ստանալ»: Այս խօսքը կարող է և ճիշդ լինել՝ նայելով թէ մարդ նորան ինչ մեկնութիւն է տալիս: Սակայն այն իմաստը, որով սոյն խօսքը Ռուսօի ազդեցութեան տակ դրանուող Աեստինգի փամանակն է ըմբռնել, սխալ է: Այդ սխալ ըմբռնման պատճառը պիտի որոնել տասնևութերորդ դարու ամբողջագէտ թեթեւ—մտիերևութային փիլիսոփայութեան մէջ: Այդ փիլիսոփայութեան ասելով՝ այն ամենն, ինչ որ պատմական է դարձել, ո՛չ միայն էական չէ և անհրաժեշտաբար յառաջ եկած, այլ պատահական և նոյն իսկ խանդարող: Արժէք ունի միմիայն այն ինչ որ այդ դարը «բնական» և «բանականութիւն» էր անուանում: Այդ բաներն ընդունուում էին իբրև միանգամ ընդ միշտ տրուած, անփոփոխ մեծութիւններ: Ուստի և միմիայն զոցանից պէտք է ծագած համարել՝ նոցա ասելով և միմիայն զոցանից պէտք է ծագած համարել՝ նոցա ասելով մարդ ծննդից ի վեր իւր «բանականութեան» մէջ մի ամուր-հաստատուն դրամագլուխ ունի, որի շնորհիւ նա կարող է ձեռք բերել այն ամենն, ինչն որ նա կարօտութիւն ունենայ առարինի ու երջանիկ կեանք վարելու համար: Նոքա հաւատում էին նաև, թէ մարդս «բնութեան» ներդաշնակ կերպով յարմարեցրած է, ուստի և հարկաւոր է միայն, որ նա «բնութեան համաձայն» փթթի-ծաղկի ու այդպիսով էլ իւր սեռի մի փառաւոր անհատ գաննայ: Այս աշխարհհայեցողութիւնն այլ ևս կարիք

չունէր պատմութեան, որովհետեւ մարդս՝ նորա կարծիքով՝ չի կարող պատմութիւնից ստանալ և ո՛չ մի նոր բան, որին նա դեռ ևս տէր եղած չլինէր: Հետևապէս և պատմութիւնը սոյն աշխարհհայեցողութեան հետևողական ներկայացուցիչներին անգամ իրաւամբ մի տարօրինակ ու յեղաշրջուած խաղ էր թուում և այն ժամանակի նշանաբանն էր՝ ազատուել այս ստրկացնող պատմութիւնից ու վերադառնալ դէպի բնութեան ազատութիւնը: Յիբաւի և ինքը Լիտինզն ամեն ճիգ թափում էր պատմութեանն իւր դոյութեան իրաւունքը տալու, բայց նորա անհաստատ ջանքերն անհասկանալի էին մնում իւր ժամանակին: Ընդհակառակն այս դարն իրեն կերակրում էր բանականութեան յաւիտենական կարծուած ճշմարտութիւններով, նորից դանդաղ «բնական կրօնով» և իրեն այս բարիքներէ տէր համարելով հարբացած վերեկից էր նայում «պատահական պատմութեան» վրայ: Այս դարը կարեց կապը կրօնի ու պատմութեան մէջ: Բոլոր պատմական կրօնները, այսպէս էր սուսցանում տան և ութերորդ դարը, ամենալաւ դէպքում խոյ լսի ծածկոյթներ [Verhüllungen] են միակ ճշմարիտ բնական կրօնի, այն կրօնի, որ միշտ Լոզել է ու պիտի լինի: Իսկ այս կրօնի բովանդակութիւնը չէ այլ ինչ, բայց եթէ անվախօխ բանականութիւնը: Եւ ոչ խոյ քրիստոնէութիւնն ու իւր հիմնադիրը կարող են որ և է առանձին պահանջ յարուցանել այս իրողութեան դէմ, որովհետեւ այն ամենն, ինչ որ առանձնայատուկ է, պատահական է, աւելորդ և վնասակար:

Արդ՝ այս աշխարհհայեցքն այսօր թէպէտ և բնաջինջ չէ եղած, բայց յողթահարուած է ու մերժուած: Ո՛չ մի այլ կէտում մեր դարու ոգին իրեն այնքան ուժղին կերպով չի հակադրել նախկին դարու ոգուն, ինչպէս այս խնդրում: Եւ այս բանի համար մենք շնորհապարտ ենք Հեղեղին և իւր մեծ աշակերտ Ռանկէին, սակայն ո՛չ նուազ չափով նաև քրիստոնէական հաւատոյ հզօր հակադրեցութեան: Այն ցնորակն պատկերը, թէ բանականութիւնը մի հէնց սկզբից պարարտաբան է, խորտակուեց. «սրբազան բնութիւն» կուսքի դիմակը պատուեց և իւր քողը մերկացաւ այն ահաւել խնդիրը, որ դիւրահաւանութեամբ ընդունուած «բնական կրօն» ըմբռնման հիմքն էր կազմում: Արբազան բնութեան ու աշխարհիկ պատմութեան, բանականութեան յաւիտենական ճշմարտութեան և պատահական պատմութիւնների մասին տեղի ունեցող անվխ դատարկարանութեան փոխարինեց ծանօթութիւն պատմութեան հետ, պատմութեան, որից մենք ստա-

ցել ենք այն ամենն, ինչ որ ունինք և որին մենք պարտա-
կան ենք այն ամենի համար, ինչ որ ենք: Գլխաւորապէս
երկու ըմբռնումներ են, որոնք աճող պարզութեամբ առաջին
կարգն անցան. զարգացումն և անհատականութիւն:

Պատմութեան նշանակութեան ճիշդ ըմբռնման հետ միա-
տին յետ արուեսց նորան նաև կրօնը: Կրօնը մի հէնց սկզբից լրա-
ցած, պատրաստի պատկեր չէ, այլ արտադրուած մարդկու-
թեան պատմութեան ընթացքում: Իւր նորանոր աստիճան-
ները լոկ առ երևոյթս չեն, այլ իրականութիւն. իւր մարդա-
րէներն ու հիմնադիրները եղել են իսկապէս մարդարէներ ու
հիմնադիրներ. նորա մարդկութիւնը վերածել են մի աւելի
բարձր աստիճանի: Առտի և պատմութիւնը դիտելիս մարդ
պարտաւոր է պատկառանքով վերաբերել նորա մէջ գոր-
ծող սպուն և երակտադիտութիւն տածել դէպի այն բոլոր
անձինք, որոնցից մենք որ և է բան ենք ստացել և առանց
որոնց մենք մեկ ներքին և արտաքին կեանքի մէջ աւելի ազգատ
կը լինէինք, քան ենք:

Այսպիսով յառաջ եկաւ մի այլ արամադրութիւն, քան
այսպէս կոչուող լուսաւորութեան դարինն էր, և այդ տանն և
ութերորդ դարու յարձակումն կրօնի և պատմութեան մէջ
եղող կապի վրայ այսօր իրօք յետ է մղուած: Սակայն յարձա-
կումներին մի ամբողջ շարք էլ մեր օրերումն է յառաջ եկել:
Հիմա էլ ամենից առաջ լուսւմ ենք հետեւեալ խօսքը. Հէնց որով-
հետև քրիստոնէական կրօնը պատկանում է պատմութեան, իսկ
պատմութեան մէջ ամեն ինչ ենթակայ է զարգացման, ապա
ի վերջոյ նա էլ լոկ մի օղակ է այս զարգացման մէջ, ուստի և
պէտք չէ իւր հիմնադրին մի յատուկ և եղակի տեղ ու նշա-
նակութիւն վերադրել: Հէնց որ այս յարձակումը մարդ յետ է
մղում, մի նոր հակառակորդ է ելնում ու ասում. Քրիստո-
նէական կրօնի հիմնադիրը կարող է նաև ամեն համեմատու-
թիւնից վեր մի մարդ եղած լինել, սակայն նա գարեր առաջ է
ապրել, ուստի և անհնար է, որ մենք այսօր մեր հոգսերով ու
կարիքներով նորան դիմենք ու նորան մեր կեանքի վէմ ընդու-
նենք. այլ ևս խօսք չի կարող լինել նորա անձի, այլ լոկ վար-
դապետութեան, «սկզբունքի» մասին: Յետ ես մղումնաև այս
թշնամուն, յաջորդում է մի այլ յարձակումն ևս. ասում են.
Գուք Յիսուս Քրիստոսի մասին կարող էք ասել, ինչ որ կամենու՞մ
էք, և նա էլ կարող է եղած լինել այն ամենն, ինչ որ գուք
ասում էք, բայց գուք դորա համար ոչ մի դրուական չունիք.
որովհետև պատմական ըննադատութիւնը նորա պատկերը մա-

սամբ եղծել է, մասամբ էլ անհաստատ դարձրել, և եթէ այդ պատկերը նոյն իսկ աւելի վստահելի լինէր՝ քան է, դատ-դատ պատմական իրողութիւնները երբէք չեն կարող այնպէս հաստատ կերպով իմացուել, որ նոցա միջոցով հնար լինէր բացառապէս կրօնական հաւատոյ հիմքը:

Սորա են այն երեք պատերը, որոնք պատմութիւնը եկեղեցու հաւատոյ դէմ շարել է. ամեն մի գաղանի թէ բացարձակ կասկածի հիմք գլխաւորապէս սոցա մէջն է, և մեղանից իւրաքանչիւրը որ և է ձեռով այս կասկածներն ունեցել է և մատծելու նիւթ դարձրել:

I.

Նախ և առաջ՝ ինչ վերաբերում է առաջին առարկութեան, պէտք է ասենք, որ նա ամենից աւելի տարածուածը, բայց և ամենից աւելի էլ թոյլն է: Անշուշտ, մեր այսօրուայ պատմական դիտողութեան զօրաւոր կողմն է, որ մենք ուշագրութիւն ենք դարձնում ամեն տեղ զարգացումն գանելու, ապացուցանելու և բացայայտելու, թէ ինչպէս մի շան յառաջ է եկել միւսից: Ար այն է պատմաբանի կոչումը, այս մի այնպիսի հասկացողութիւն է, որ այլ ևս երբէք չի մոռացուիլ որ պատմութեան ճշմարիտ ըմբռնումն միմիայն այս ճանապարհով ստացուել կարող է, անկասկած է, և նաև նորա, որոնք նորագոյն պատմագիտութիւնը հայհոյում են, անկարող են նորա մեթոդի ազդեցութիւնից ազատ մնալ: Նորա միայն թերի ու վատ են կատարում այն աշխատանքը, որը հայհոյանքի ենթարկուողներն աւելի լաւ են գլուխ բերում: Սակայն կուրացած պիտի լինել ասելու համար, թէ սրովհետև ամեն մի պատմութիւն զարգացման պատմութիւն է, պէտք է և կարելի նորան ընդունել է իրրև սոսի նկարագիր բնական կերպով տեղի ունեցող գործողութեան: Սոյն ուղղութեամբ կատարուած ու դեռ կատարուող փորձերը մինչև այսօր հէնց իրենց մէջ էլ կրում են իրենց հերքումը: Առ առաւելն կարելի է անտեսութեան պատմութեան մէջ, ուր խշտում է նիւթական դոյութեան կուլուր, ցոյց տալ, թէ երկոյթներն իրար որոշ չափով ճշգրտութեամբ են յաջորդում. սակայն այնտեղ ևս այս կուլուր միշտ էլ ընդհատուած է իդէալական մոմենտներով, որոնք զօրեղ կերպով միջամտում են: Այն ինչ գաղափարների ու բարոյական մաքուր մտքերի ամենաբարձր չափերի պատմութեան մէջ կան պարագաներ, ուր պատմաաւանութեան անտաշ բանաձևը միանգամայն

անբաւարար է: Քէպէտ և այստեղ ևս սոյն բանաձևն ընդարձակ շրջան ունի—մի շնոր աւելի ընդարձակ սուպարէզ, քան թէ այդ նախորդ սերունդները երևակայել են. հարկեցուցիչ ու մղող կարելից են ծնուել շատ յառաջադիմութիւններ. մենք կարող ենք դեռ այսօր էլ գոցա պատճառները գտնել ու իւրեանց յառաջ դալը ներքուստ զգալ: Եւ սակայն առանց մի անհասի, մի անձնաւորութեան ոյժի ու ջանքերի և ո՛չ մի մեծ ու յառաջադէմ գործ չի՛ կարող մուտ գործել, յաղթանակ տանել ու տիրել: Բայց ուստի՞ է հզօրի կարողութիւնը և գործչի գործը: Կնչիցն է, որ մի յառաջ մղող գաղափար, մի փրկարար միտք մեռեալ քարի պէս անպատու ու անարժէք կերպով մի սերնդից միւսին է աւանդուում, մինչև որ մէկը նորան ըմբռնում ու նորանից կայծեր է հանում: Աւստի՞ է այն բարձր կարգի ծնունդը, երբ մի միտք ու մի հօգի դուգակցում են, իրար հետ միանալու, յաւիտեանս մէկ մէկին պատկանելու և կամբին տիրապետում են. ուստի՞ է արևութիւնը՝ անմիտ աշխարհի ընդդիմութիւնը յաղթահարելու. ուստի՞ է այն գօրութիւնը, որ համոզումն է աղբում: Մի անմիտ հոգեբանութիւն չի աեսնում, որ սղբա են պատմութեան խսկական լծակները. նա միայն հարցնում է. Սակայն մի՞թէ այդ մարդը որ և է նոր բան է առել. կարելի չէ՞ այս նոր բանն իր նախորդներից ծնունդ առած համարել. և նա ինքնաբաւականութեամբ լցուում է, եթէ ուղիղ կերպով հասու է լինում, թէ այն միայն համեմատաբար է նոր և որ խսկապէս մի առանձին բան չի տեղի ունեցել: Ո՛չ—ո՛չ միայն ի սկզբանէ էր Բանն, Բանն, որ է միաժամանակ գործ և կեանք, այլ այդ նոյն կենդանին, համարձակ ու եռանդուն Բանն՝ այսինքն անձնաւորութիւնն՝ է, որ պատմութեան ընթացքում շարունակ իշխել է առաջ մղող կարիքի մէջ ու նորա վրայ: Հարկաւ, այստեղ ևս կան միջնորդութիւններ ու զարգացումներ: Ո՛չ մի ջան ինքն իրեն չի՛ վառուում, մի մարդարէն է, որ յարուցանում է միւսին. և սակայն մենք անկարող ենք թափանցել այս խորհրդաւոր զարգացման մէջ, այլ միմիայն զգալ:

Կնչ որ ուղիղ է ընդհանուր առմամբ պատմութեան մասին, իւր այն ըուր ճիւղերի նկատմամբ, որոնք ընդհանրապէս հոգեւոր կեանքին են վերաբերում, ուղիղ է նաև ամենաբարձր իմաստով ու ամենամեծ չափով կրօնի նկատմամբ, կրօնի, որ ամենախոր խնդիրն է պատմութեան մէջ: Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ: Երբէք աւելի պարզ ու անպաճօյճ կերպով չեն ար-

տայտաբանել ամբողջ իրականութեան այդ երկու ամենամեծ կենդրոնները և մեր պատմաբանները դեռ շատ բան ունին այս խօսքից սովորելու, իրենց գլուխը չկորցնելու համար: Սակայն կրօնի մասին ևս ճիշդ է, որ նա զարգացումն է ունեցել և մշտական զարգացման ենթակայ է: Նորա պատմութեան մէջ ևս կարելի է ասացուցանել, որ կարիքն է եղել առաջ մղողը, այն կարիքը, որ սոցիթել է սովորեցնում, որ մարդու բխացնում է, որ ստիպում է ծեղից անգամ բռնել: Սակայն հէնց այս նոյն պատմութիւնը մեզ ցոյց է տալիս նաև այն, որ երբէք ո՛չ մի ձգտումն դէպի վեր և ո՛չ մի յառաջադիմութիւն չի եղել առանց մի անձի հրաշալի միջամտութեան: Ո՛չ թէ իւր ասածն է մի անակնկալ նորութիւն—եկն իբրև եղև լրումն ժամանակի և ասաց այն, ինչին որ այն ժամանակը կարօտ էր—այլ թէ նա ինչպէս էր ասում, ինչպէս էր այդ բանը իւր մէջ ոյժ ու մի նոր կեանքի զօրութիւն գարձել, ինչպէս է նա շարունակում իւր աշակերաների միջոցով նոյնը սերնդէ սերունդ հաղորդել: Եւ այս էր իւր գաղանկը ու նորը: Ահնաժութեամբ է վերաբերում մարդկութիւնը դէպի այն բոլոր մեծ անձինք, որոնք իրեն շնորհուել են, դէպի հետադասողները, գեղարուեստի մարդիկ և հերոսները. և սակայն նա պաշտում է միայն իւր մարգարէներին ու կրօնի հիմնադիրներին, որովհետև նա զգում է, որ այստեղ իշխել է մի ոյժ, որ մարդկանց աշխարհից ազատում ու սովորական իրականութիւնից վեր է բարձրացնում:

Սակայն երբ մենք այսպիսով բոլոր մարգարէներին ու կրօնի հիմնադիրներին իբրև մի միութիւն ենք վերցնում, ապա թուում է, թէ մեր կրօնի հիմնադրի առանձին նշանակութիւնը չէ՞ որ գարձեալ կարչում է: Ի հարկէ ո՛չ: Որովհետև չկայ մի թանձրացեալ գաղափար սեռի, որ ընդգրկել կարողանար այն բոլոր անձանց տարբերութիւնները, որոնց մենք իբրևամբ մարգարէ և կրօնի հիմնադիր ենք անուանում. նոցանից իւրաքանչիւրն բոս ինքեան մի առանձին մեծութիւն է և պէտք է առանձին էլ գատողութեան առնուի: Եղել են կրօնի սուրբ և անսուրբ հիմնադիրներ, ինչպէս և վսեմ ու տարօրինակ մարգարէներ: Անթիւ շնորհներ ու զօրութիւններ են հեղուել նոցա վրայ. տակայն չափ, եռանդ, ուղղութիւն, նպատակ—ամեն ինչ տարբեր է նոցանից իւրաքանչիւրի մէջ. ամեն ինչ կը հարթուի, անհնար կը լինի նոցա միմեանցից զանազանել, եթէ այս կարևոր հանգամանքն ուշադրութեան չառնուի: Անմիտ ձեռնարկութիւն կը լինէր նաև ցանկանալ հէնց սկզբից ցոյց տալու, թէ ի՞նչ չափով է հոգին, այսինքն Ասատուոյ Հոգին, նոցանից իւրաքան-

չիւրի մէջ իշխել: Այս պէտք է իմանալ ու եզրակացնել հէնց իրենից՝ երևոյթից: Բայց մենք մէկի մասին զիտենք, որ նա ամենախորին հեղու-թիւնն ու համբի սրբութիւնը միացրել է իւր՝ իրենից առաջ եղած բոլոր մարդարէներէց ևս վեր լինելու ցանկութեան պահանջի հետ. Աստուծոյ Որդին: Միմիայն նորա մասին զիտենք մենք, որ այն մարդիկ, որոնք նորա հետ հերել ու խմել էին, նորան ոչ թէ միայն իբրև ուսուցիչ, մարդարէ և թագաւոր են յառաքանել, այլ իբրև իշխան հենաց, փրկիչ և դատաւոր աշխարհի, իբրև իրենց դոյութեան կենդանի ոյժ,— ես չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մէջ— և որ շուտով նոցա հետ մի խումբ հրէաներ և հեթանոսներ, իմաստուններ և յիմարներ խոստովանել են, թէ ի լրութիւն է այս մի մարդու են շնորհս փոխանակ շնորհաց առնելու: Այս իրողութիւնը, որ ամեն կասկածից վեր և ազատ է, եղական երևոյթ է պատմութեան մէջ և պահանջում է, որ իւր հիմքն ու ազբիւրը կազմող Յիսուսի անձնաւորութիւնն էլ մի առանձնայատուկ յարգանք վայելի:

II

Այսպիսով մեր պատասխանեցինք առաջին առարկութեան, թէ Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան մի առանձին, եղակի զիբք պէտք չէ՛ վերագրել, եթէ ընդունում ենք, թէ այն ամենն, ինչ որ պատմական է, ենթակայ է դարդացման: Բայց հիմա էլ մի ծանր առարկութիւն է ելնում: Ասում են, քրիստոնէութեան հիմնադիրը կարող է և յիրաւի մի աննման մարդ եղած լինել— շատ դարեր առաջ է ապրել նա, ուստի և անհնար է, որ մենք նորան մեր կրօնական կեանքի մէջ ընդունենք ու նորան իբրև այդ կեանքի վէմի ապաւինենք. այլ ևս իւր անձնաւորութիւնը չէ, որ պէտք է ուշադրութեան առնել, այլ միայն իւր վարդապետութիւնը կամ, ինչպէս որ ուրիշներն ասում են, սկզբունքը: Այս առարկութիւնն էլ աւելի դորեղ հետեւեալ կերպով է արտայայտում. կրօնի մէջ վերջ ի վերջոյ էական խնդիրն է՝ յարարերութիւն առ Աստուած. Աստուած և մարդու հոգին, մեր հոգին և Աստուած— այն ամենն, ինչ որ այս փոխադարձ յարարերութեան մէջ մուտք գործել ու տեղ բռնել է ցանկանում, վերացնում է այս փոխադարձ յարարերութեան բացարձակութիւնը և խանգարում նորա ջերմութիւնը, անկեղծութիւնն ու ազատութիւնը:

Նս կարող էի փորձել, այս առարկութեան դէմ մասնանիչ

անել եկեղեցու ուսումն՝ փրկութեան և հաշտութեան մասին Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբ. սակայն ես երկիւղ պիտի կրէի դորանով լսիլ մի աննշան շափով ընդունելութիւն գտնելու, զի այն արտայայտութիւնը, որով եկեղեցին սոյն ուսումն ձեռակերպել է, պատկանում է այն խօսքերի շարքին, որոնք այսօր ամենից քիչ են հասկացում ու այդ պատճառով էլ ամենից շատ կասկածի ենթարկուում: Այս իրողութիւն է, իրաւամբ թէ անիւրաւացի կերպով, այդ այլ խնդիր է: Քանի որ այս այսպէս է՝ ես ուզում եմ փորձել մի այլ ճանապարհ դնալու: Ամենից առաջ—միանգամայն ճիշդ է, որ կրօնը ո՛չ այլ ինչ է: Բայց միայն մի յարաբերութիւն հոգւոյ առ Աստուած: Որ մարդս Աստուծուն գտնի, նորան իբրև իւր Աստուած ճանաչի, նորա երկիւղի մէջ շնչի, նորան ապաւինի, այս զօրութեան մէջ սուրբ և երջանիկ կեանք վարի—այս է կրօնի բովանդակութիւնն ու նպատակը: Քորանից վեր ոչինչ չկայ և դորա հետ միաժամանակ ո՛չ մի օտար բան դոյութիւն պիտի չունենայ: «Նողով-սրտով անձնատուր եղիք սպասաւորելու նորան, որ զեկամարում է երկինքը»: Քանի ուժգին ու վճիտ է բարեպաշտութիւնը, այնքան էլ նա աւելի ու աւելի է արտայայտուում հէնց այս խօսքով: Այս են վկայում Յիսուսի աշակերտներն ամեն դարում. այս է վկայում ինքը Տէրը, մեզ չայր մերն ուսուցանելով, ուստի և մենք իրաւունք չունինք լուտանքներ թափելու այն աստուածաբաններն զլիսին, որոնք կրօնի բովանդակութիւնն այս ձևով էլ ամփոփում. արտայայտում են: Եւ սակայն կրօնի նկատմամբ ամենամեծ շափով ճիշդ է այն, ինչ որ ճշմարիտ է ամեն մի բարոյական բարիքի մասին, թէ այլ բան է իւր ճրջմարտութիւնը խոստովանելը և այլ՝ իւր զօրութեան տէր լինելը: Մենք կարող ենք քրիստոնէական կրօնի իրաւունքը, բարեպաշտ կեանքի խաղաղութիւնն ու գեղեցիկութիւնը, ճանաչել և խոստովանել, բայց և միանգամայն անընդունակ լինել մեր կեանքն այդ վեհ վիճակին հասցնելու: Քրիստոնէութիւնը կարող է զբաւել մեր ուշքը՝ ինչպէս մի փայլուն աստղ, բայց և հուր չլինել ու տակաւին չվառուել մեր կրծքում: Մենք կարող ենք ամենաջերմ կերպով զգալ այն կապանքների ծանրութիւնը, որոնցից մենք փախչել ենք կամենում, և սակայն միանգամայն անզօր լինել մեզ նոցանից ազատելու: Ո՛չ միայն մենք կարճ կենք այսպէս լինել — այսպէս իսկ ենք մենք: Ով որ այս փորձառութիւնն ունեցել է և միշտ ևս նորէն ունի, բայց և նոցանից ազատուում է, նա՛ միայն գիտէ, որ փրկուեց, զի Աստուած նորա հետ խօսեց: Ով որ այս ձայնն Աստուծոյ անձամբ

չի՛ լսել, նա առանց կրօնի է: «Յօսի՛բ, Տէր, քո ծառան լսում է*» — ահա այն ձևը, որի մէջ միայն գոյութիւն ունի կրօնական կեանքը:

Ինչպէս որ զանազան են մարդիկ իրենց բազում, այդպէս էլ զանազան կերպով է խօսում Աստուած նոցա հետ: Եւ սակայն մենք գիտենք, որ մեզանից շատ քչերն են առանց մարդկային օգնութեան և միջնորդութեան իրենց ներքին անհատական կեանքի փառ շրջանում Աստուծոյ ձայնը լսում ու հասկանում: Ընդհակառակն՝ մի քրիստոնեան է, որ կրթում է միւսին, մէկի սիրան ու հոգին վառում է միւսի սիրտ ու հոգուց և կամքի ոյժը՝ ցանկանալու լսի այն, ինչ որ մարդու հաւանելի է, ցայտում է այն խորհրդաւոր զօրութիւնից, որի միջոցով մի կեանք յարուցանում է միւսին: Աստուծոյ այս պատգամաբերներն ու զօրութեանց շարքը վերջանում է Յիսուս Քրիստոսով: Սոքա ամենն էլ սկիզբն են առնում նորանից. նորանից է բըշխել այն կեանքը, որ սոքա այժմ վարում են իբրև իրենց սեպհական կեանք: Զանազան շափով են գիտակցում սոքա, թէ իրենք կենդանի հաղորդակցութեան մէջ են Յիսուսի հետ — ո՞վ կարող է այս ժխտել — և սակայն սոքա ամենն էլ ապրում են նորանից և նորա շնորհիւ:

Ահաւաստիկ մի իրողութիւն, որ պատմութեան մէջ շարունակ ազդող այս անձին՝ Յիսուս Քրիստոսին՝ ամեն համեմատութիւնից վեր մի արժէք է ընծայում. սակայն այն առարկութիւնը, որի դէմ մենք խօսում ենք, սորանով գեռւես լիովին չի հերքում: Յիսուս Քրիստոս մի շարունակ ազդող անձնաւորութիւն լինելով հանդերձ՝ անցեալին պատկանող մի մեծութիւն է: Բայց այսպէս չի՛ մտածում քրիստոնէական հաւատը՝ մեր ու շքը նորա վրայ դարձնելով: Մենք պէտք է փորձենք այս հաւատը խորն ըմբռնելու, որպէս զի իւր կարծիքի իրաւունքը, եթէ նա յերաւի արդարացի է, հասկանանք:

Քրիստոնէական հաւատը չէ՛ մեզմ փառաբանութիւն երկրաւոր կեանքի և կամ սրտանց անձնատուր լինել նորա ներդրութիւններին ու խտութիւններին, ինչպէս որ ոմանք երբեմն ասում են: Ա՛յ — քրիստոնէական հաւատն է վերջնական որոշումն ծառայելու Աստուծուն՝ մի վճիռ ընդդէմ աշխարհի: Քրիստոնէական հաւատոյ առարկան է յաւիտենական կեանքը, ընդունել, որ ընդթեան մէջ և նորանից վեր կայ արքայութիւն սրբութեան և սիրոյ, մի անձեռակերտ քաղաք, որի ընտկիչները

*) Ա. Թագ. Գ 9:

լինելու ենք մենք հոչուած: Եւ այս լըի հետ միասին մեր առաջ մի պահանջ է դրոււմ՝ մեր սիրտն ու միտքը մարտելու և անձնուրաց լինելու, և մենք զգում ենք, որ կարուհի կերպով մեզ աջարկուում է «համ այս կամ այն», որ և մեր ներքին կեանքի վրայ վճիռ է արձակոււմ: Հնարաւոր է արգեօք այս կռուից յաղթութեամբ ելնել. կայ արդեօք մի աւելի բարձր իրականութիւն, որի առաջ աշխարհը ոչինչ է. թէ՛ մենք մոլորութեան մէջ ենք մեր իսկ զգացումների և նախազգացումների ու դուշակութիւնների մասին. թէ՛ մենք միանգամայն իրականած ենք անազայտ բնութեան շրջանակի ու մեր երկրաւոր գոյութեան օղակի մէջ և լսի խղճալի կռիւ ենք մղում մեր իսկ ստուերների և սրուականների դէմ: Ահաւասիկ խնդիրները խնդիրները և տարակոյսների տարակոյսները—է՛ն մեծ խնդիրներն ու տարակոյսները: Արդ, այն ժամանակից հետէ, երբ սկիզբն առաւ քրիստոնէական հաւատը, այս խնդիրները լուծոււմ են Յիսուս Քրիստոսի վրայ աչք յառելու միջոցով—լուծոււմ են ս՛չ թէ փիլիսոփայօրէն ապացուցանելու ձևով, այլ երբ մենք վստահութեամբ լի հայեացքով կանգ ենք առնում նորա կեանքի պատկերի առաջ: Երբ որ վստանդը մօտ է, թէ ահա Աստուած և այն ամենն, ինչ որ սուրբ է մեզ համար, խաւարով պատոււմ ու անտեսանելի են դառնում մեզ, կամ երբ յանկարծակի վրայ է հասնում դատաստանը մեր գլխին, երբ անողոր բնական կեանքի ու ժգին տպաւորութիւնները մեզ վրայ յաղթանակ են տանում և մեզ թւում է, թէ ահա բարոյ և շարի սահմանները շփոթոււմ—խառնոււմ—միանում են, երբ մենք ինքներս էլ բթանում ու սաղտիանում ենք. յոյսներս կտրում, թէ այս մութ աշխարհում գեռ հնարաւոր է ճանաչել Աստուծուն, այն ժամանակ մի՛ միայն Յիսուսի անձնաւորութիւնն է, որ կարողութիւն ունի մեզ փրկելու: Ահա վարած մի կեանք. ամբողջովին Աստուծոյ երկիւղի մէջ, հաստատուն, անձնուրաց և սուրբ. այստեղ վայլում ու լոյս է տրուում մի վեհութիւն, մի սէր, որ մեզ դէպի ինքն է ձգում: Այստեղ ողջը մի անընդհատ կռիւ էր աշխարհի դէմ. մաս-մաս և հեղհեղէ կորստեան էր մասնուում մի երկրային բարիք միւսի ետեկից. ի վերջոյ մայր մտաւ նաև այս կեանքը՝ ամօթի ու նախատինքի ենթարկուելուց յետոյ, և սահայն—ս՛չ մի հոգի չի կարող դերձ մնալ հետեանալ տպաւորութիւնից. Ավ այսպէ՛ս է մեռնում, այն, նա մեռնում է, բայց նա չի՛ մեռնում, այլ ազրո՛ւմ է: Այս կեանքովն ու մահովն է, որ մարդկութեան աչքը բացուեց և նա հաւատափացաւ, թէ կայ յաւիտենական կեանք և աստուա-

ճային մի սէր, որ յաղթահարում է չարին, այս' նոյն խնդրին: Մարդկութեան աչքը բացուեց և նա տեսաւ աշխարհի և երկրային բոլոր բարեքների ունայնութիւնը մի փառքի առաջ, որին մահն անգամ անգոր է որ և է մնաց հասցնելու: Տասն ութ դար է անցել այս պատմութիւնից, բայց եթէ մենք մեզ լուրջ կերպով հարցնենք, ինչն է մեզ վստահութիւն ներշնչում հաւատալու, որ Աստուած պատմութեանն իշխում է, ո՛չ լոկ ուսմունքների և գաղափարների միջոցով, այլ անձամբ նորա մէջ կանգնած լինելով, ինչն է մեզ սիրտ ապահաւորեցնող: Սոսի և — նորա միջոցով է խօսում Աստուած մեզ հետ: Սոյն Յիսուս Քրիստոսի մասին վկայուած է, թէ սա է ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք, և հէնց իբրև մի այսպիսի անձն նա դեռ այժմ էլ յայտնում է մեր ներքին աշխարհին, և այդ իսկ է իւր ներկայութիւնը մեզ մօտ: Ինչպէս հարկաւ էսկանն այն է, որ հոգին Աստուծուն գտնի ու միանայ նորան, այնպէս էլ անշուշտ Յիսուսն է լսկական Փրկիչը, ճանապարհն ու Տէրը, որ մարդկային հոգուն առաջնորդ է հանդիսանում դէպի Աստուած: Այն' ինչ որ քրիստոնէական եկեղեցին նորա մասին քարոզում է, թէ նա կենդանի է, մի ճշմարտութիւն է, որ դեռ այսօր էլ ընդունելի է. և եկեղեցին իրաւացի է նաև այն խնդրում, որ նա մեզ առաջնորդում և Յիսուսի չարչարանքների ու մահուան առաջ կանգ առնել է տալիս: Սակայն թողնենք այսօր այդ խնդիրը և դորա մասին շխտենք ընդհանրապէս այն ձևով, ինչպէս որ յաճախ խօսում են: Որ արդարի տանջանքը բարեբաղդութիւն է պատմութեան համար, մենք այս հասկանում ենք այն չափով, որքան մենք ըմբռնում ենք բարոյական կառուի լըրջութիւնն ու զգում անձամբ զոհուելու թողած ապաւորութիւնը: Բայց չմենք քող ենք սփռում Քրիստոսի չարչարանքների վրայ հէնց այն պատճառով, որ մենք նոցա խիստ մեծարում ենք. մենք դատապարտութեան արժանի մի անհամեստութիւն ենք համարում այս խորին՞գաղանիքները, որոնց մէջ ծածկուած է տանջանքի աստուածային խորութիւնը, ոսկարկել, հաշուել և կամ նոցա հետ խաղալ ու կատակներ անել և նոցանից ձեռք չվեցնել, մինչև որ ամենայարգին ևս անարդ և անհամ մի բան երևի: Եւ ապա — մենք պէտք է չմոռանանք, որ ամեն մի հուատ առ Քրիստոս մի սոսկ «Տէ՛ր, Տէ՛ր, ասել է, եթէ նա տակաւին ոյժ չի՞ դարձել

հնազանգութեան ի բարին: Եւրբ Քրիստոս իրեն եզրայր և քոյր անուանեց ոչ այն անձանց, որոնք նորան տեսնել և կամ նորա անունն աշխարհում տարածել էին ցանկանում, այլ նոցա, որոնք նորա երկնաւոր շօր համբքը կատարում են: Այս իմաստով էլ մենք պէտք է գտտենք ամեն մի հաւատաւոր Քրիստոս:

III

Որ Յիսուս Քրիստոս հակառակ այն տաճն և ութ դարերի, որոնք մեզ նորանից բաժանում են, կարող է ունենալ և ունի իւր տեղը բրիտանէի կրօնական կեանքում: որ իւր անձը, և ոչ թէ միայն իւր վարդապետութիւնը, գեռ այսօր էլ նշանակուած է յարութիւն աննելու—ահա այս էր, որ ես փորձեցի ցոյց առաւ Բայց կայ մի երրորդ և վերջին յարձակումն մտ. «Դուք կարող էք, ասում են մեզ, Յիսուս Քրիստոսի մասին ասել, ինչ որ ուզում էք, և նա կարող է եղած լինել այն ամենն, ինչ որ գուր ասում էք—բայց դուք դորա համար ոչ մի հաւատտի ապացոյց չունիք. պատմական քննադատութիւնը նորա պատկերը մասամբ եղծել է, մասամբ էլ կատկածելի դարձրել, և եթէ այդ պատկերը նայն իսկ աւելի ստոյգ լինէր, բան թէ է—դատ-դատ պատմական իրողութիւնները երբէք չեն կարող այնչափ վտանակի կերպով իմացուել, որ հնար լինէր նոցա միջոցով կրօնական հաւատը հաստատուն հիմքի վրայ դնել»:

Այս յարձակումն ամենախոշորն է. եթէ սա ամեն կէտում իրաւունք ունենար, շատ վատ կըլինէր. «Պատմական քննադատութիւնը նորա պատկերը մասամբ եղծել է, մասամբ էլ կատկածելի դարձրել»: Յիբաւի հէնց այսպէս էլ թուում է մարդու առաջին հայեացքը ձգելու միջոցին: Թողնենք քննադատութեան այն արտադրութիւնները, որոնք այսօր բուսնում են, իսկ վաղն արդէն վառարանն են նետուում. խօսենք միմիայն այն բանի մասին, որ միշտ նորէն և աճող դորութեամբ մէկից միւսին է աւանդուում: Ամենից առաջ մի հայեացք ձգենք արտաքին պատմական իրողութիւնների վրայ. խախտուած է աւանդութիւնը Յիսուսի Քրիստոսի կեանքի պատմութեան սկզբնաւորութեան մասին. խախտուած է արժանահաւատութիւնն այն պատմութիւնների, որոնք յիշատակում են նորա մասին, և քննադատութիւնն անկարող է վերջ տալ նաև այն ծանրակշիռ կատկածներին, որոնք ծնունդ են առնում շատիկ առաւօտեան անցքերի մասին մեզ պատմող տեղեկութիւններից: Իսկ ինչ վերաբերում է նորա կեանքի համառօտ պատկերին, նորա ճառերին ու ուս-

ժան: թուի թէ պատմական գիտողութիւնը նոցա վերա-
կանդնում է: Ա. Գրքի պարզ-անպահանջ ընթերցողը սովոր
է այն ամեն գիմազծերը, որոնք այստեղ նորա բառաջն են
եղում: ժամանակից դուրս և վեր ըմբռնելու: Կա միմիայն
տեսնում և գգում է: Թէ ինչք պետք է ընդունի իբրև մի պատ-
մասածքի բուն իմաստ, որ վերաբերում է նաև իրեն. ըստ այսմ
էլ մի ժամանակ եկեղեցին սրտելու ու սահմանել է քրիստոնէական
վարդապետութիւնը: Այն ինչ պատմական գիտողութիւնը և՛
պարտք և՛ ցանկութիւն ունի աշխից յթոյնելու այն թանձրացեալ
զծերը: որոնց մէջ մի ժամանակ արդարև կեանք և ուսումն են
եղել: Նա որոնում է գրանելու քրիստոնէութեան կապը հին
ուխտի զարգացման: հրէից այն ժամանակի ժողովարանի կրօնա-
կան կեանքի: այն ժամանակի ակնկալութիւնների և հառմէական
-յունական աշխարհի ամբողջ հոգևոր վիճակի հետ, և նա այս
անչափութիւնները նկատում է նայն իսկ առանց երկար ու բարակ
հետազօտելու: Այսպիսով Տիրոջ առակներն ու խօսքերը և նայն
իսկ իւր կեանքի պատկերը երևան են զալիս ոչ միայն իւր ժա-
մանակի պատմութեան յատուկ դոյնով, այլ և մի որոշ սահմա-
նափակութեամբ: նորա կեանքը պատկանում է սոյն որոշ ժա-
մանակին ու շրջապատին և ո՛չ մի այլ ժամանակ չէր կարող
լինել: Սակայն նորա արժէքից ու զօրութիւնից որ և է չափով
կը պահպոէր միմիայն այն գէպբում, եթէ կարելի լինէր ապա-
ցուցանել, թէ երևոյթի էութիւնը, խորհուրդը և խօսքերի բուն
իմաստը փոխուել են: Պատմական քննադատութիւնն իմ կար-
ծիքով այս խնդիրներում ո՛չ մի փոփոխութիւն չի մտցրել: նոյնը
պետի տեսմ նաև իւր անձնական վկայութեան մասին: Այն
եթէ պատմական հետազօտութիւնն ապացուցած լինէր, թէ նա
մի կրօնական մոլեռանդ և երազող անձնաորութիւն է եղել,
որի խօսքն ու պատկերը իրենից յետոյ եկող ժամանակը վերա-
ծել է մարտի նպատակների և վեհ մտքերի բարձրութեան, այդ
այլ բան կը լինէր: Բայց ո՛վ է այս ապացուցել և կամ ո՛վ կարող
էր ապացուցանել: Չորս գրի առնուած աւետարաններից զատ
մենք ունինք նաև մի հինգերորդ չգրուած աւետարան, որը շատ
գէպբերում աւելի պարզ և աւելի ազգու է՝ քան թէ չորս
աւետարանները—ես ուզում եմ ասել, քրիստոնէական նախկին
համայնքի միահամուռ վկայութիւնը: Մենք հնարաւորութիւն ու-
նինք սոյն վկայութիւնից իմանալու, ինչ էր այս անձի թողած
խոր թափանցող ապաւորութիւնը և ինչ ուղղութեամբ են
հասկացել իւր աշակերտները նորա խօսքն ու իւր անձի մասին
տուած վկայութիւնը:

Հարկաւ.—նորա շորերն էլ են ժառանգութեան նիւթ դարձել։ Բայց այն պարզ և մեծ հիմնական ճշմարտութիւնները, որ նա քարոզել է, այն անձնական զոհը, որ նա բերել է, և յազթութիւնը մահուան միջոցով, այս ամենը մի նոր կեանք է դարձել նորա համայնքի համար. և երբ Պօղոս առաքեալը Հռովմայեցոց թղթի Ը գլխում այս կեանքն իբրև մի հոգևոր կեանք և Աորնութացոց թղթի ԺԳ գլխում իբրև սիրոյ կեանք է նկարագրում, նա միայն կրկնում է այն, ինչ որ իրեն ծագել էր յանձին Տէր Յիսուս Քրիստոսի։ Իրերի այս վիճակի մէջ պատմական քննութիւնն անկարող է փոխել և ոչինչ. նա կարող է այս դրութիւնը միայն աւելի լուսաբանել և զօրացնել մեր խորին յարգանքը այն Աստուածայինի առաջ, որ յանձին Արքահամի զաւակներէց մէկի մի նեղ աշխարհում և աւերակների ու փլատակների տակէց փայլեց։ Ս. Գրքի պարզ ընթերցողը պէտք է միայն շարունակի աւետարանները կարդալ այնպէս, ինչպէս որ նա մինչև այժմ կարդում էր, զի ի վերջոյ քննադատան էլ է նոյնն անում և անկարող է այլ կերպ կարդալ։ Ինչ որ նա ուզ և ծոծ է համարում, սա ևս պիտի նոյնը խոստովանի։

Բայց իրողութիւնները, իրողութիւնները։ Աս չգիտեմ, թէ էլ ի՞նչ աւելի մեծ իրողութիւն կարող է լինել, քան մինչև այժմ նկարագրածը։ Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ պատմական որ և է առանձնակի դէպք նորա առաջ։ Թէ նա ինչ նշանակութիւն կարող է ունենալ, ասում են, պարզ է։ Միմիայն արտաքին իրողութիւնն է մեզ տալիս վերջին և միակ վստահելի գրաւականը, թէ մեր հաւատին համապատասխանում է և մի իրականութիւն, որ իւր առարկաները լոկ մտացածին պատկերներ չեն, այլ որ ինքն Աստուած է ղեկավարում պատմութիւնը և դէպի սրշուած նպատակն առաջնորդում։ Ինձ շատ լաւ յայտնի է այս կործիքի արժէքը և ես ընաւ մտադիր չեմ իւր իրաւունքն ամեն մէկի առաջ պաշտպանելու։ Ա՛խ, երանի թէ դու երկինքը պատասխելի և վայր իջնէիր, որպէս զի մենք քեզ տեսնել կարողանայինք—ահա մի ցաւագին խօսք, որ յաճախ ասում է։ Բայց ես գիտեմ նաև այն, որ այս խօսքը հաւատի խորքից և ոյժից չի բղխում, այն հաւատի, որը Պօղոս առաքեալը նկարագրում է, և որ այս արտունջին յարմար է դալիս Տիրոջ այն խօսքը, թէ «Եթէ որ դուք հրաշքներ և նշաններ չէք տեսնում, չէք հաւատում»։ Մեծ բան է արտաքին հեղինակութիւնը կրօնի մէջ. շատ բան կարող են անել հրաշքներն ու նշանները. բայց հաւատի և բարեպաշտութեան վերջին հաւատաստութիւնը լոկ այնտեղ է, ուր

որ իրենց բովանդակութիւնն է Տէր Աստուածք, ապաւէնք Յիսուս Քրիստոս, որի խօսքն ու հոգին՝ իբրև զօրութիւն Աստուծոյ՝ մարդկային սրտին դեռ այսօր ևս վիպութիւն են տալիս։ Անյ մեզ, եթէ այս այլ կերպ լինէր, եթէ մեր հաւատք հիմնուած լինէր մի շարք դատ-դատ իրողութիւններէ վրայ, որոնք կարօտ լինէին պատմաբանի պարզաբանութեան և վաւերացման։ Արմիայն մեր շարքերից կարող էր ելնել մի իմաստակ և յանձն առնել լուծել այս խնդիրը․ որովհետև ճշմարիտն այս է․ անցեալի ո՛չ մի տրտաքին առանձնակի դէպք չի կարող ահներև ճշմարտութեան չափ պարզուել, որ մարդ կարողանար նորա վրայ հիմնուել ու աներ, դեռ չեմ ատում ամբողջ յաւիտենականութիւն, կառուցանել։ Ի՛նչ են կամենում ասել այն բոլոր վիպութիւնները, յիշատակարանները և հաւաստիացումները։ Բայց իրողութիւն էլ կայ իրողութիւն էլ։ Առանձին արտաքին զիտար մտում է միշտ էլ վիճելի․ այս առմամբ միանգամայն իրաւացի է Աստիկ, որ զգուշացնում է, թէ չի կարելի «պատահական պատմական ճշմարտութիւնները» ամենակարևորի հետ շաղկապել և յաւիտենականութեան ամբողջ ծանրութիւնը մի սարդի ստապնից կախել։ Իսկ մի ամբողջ կեանքի մի անձի հոգևոր բովանդակութիւնը նոյնպէս մի պատմական իրողութիւն է և վաւերական այն ազդեցութեան շնորհիւ, որ նա թաղնում է։ Այն, ինչ որ մեզ Յիսուս Քրիստոսի հետ կապում է, այս շրջանակների մէջն է։ Նա շաղկապուած է հէնց բարեպաշտութեան հետ, և այս բովանդակութեան մասին է նոյն Աստիկի խօսքը թէ «եթէ մարդ նոյն խի անկարող լինէր հերքել այն ամեն առարկութիւնները, որոնք ուղղում են Ս․ Քրքի դէմ, այնուամենայնիւ անխախտ և աննուազ կը մնար կրօնն այն բրիտանեաների սրտում, որոնք մի ներքին զգացմունք են ձեռք բերել նորա էական ճշմարտութիւններից»։

Բայց մի՞թէ յերաւի ո՛չ մի արժէք չունին արտաքին դատ-դատ աւանդուած իրողութիւնները։ Ո՞վ կարող է այնքան կարճատես և դիւրահաւան լինել, մի այսպիսի բան պնդելու։ Որ նորա շեն կարող հիմք կաղմել, մի՞թէ այդ իրաւունք է տալիս ասելու, թէ նորա դուրի են ամեն մի նշանակութիւնից։ Ամենից առաջ պէտք է հետադատել, թերևս նորա յերաւի ճշմարիտ և իրական են եղել։ Շատ բան կայ, որ մի ժամանակ հապճեպով մերժուել է, բայց աւելի խորազնին հետադատութիւնից և երկար փորձառութիւնից յետոյ նորից ստացել է իւր նախկին արժէքը։ Ո՞վ կարող է այսօր՝ օրինակի համար՝ աւետարանի մէջ յիշատակուած հիւանդութիւնների բժշկութեան խնդիրն այնպէս շտա-

այով վճռել, ինչպէս երբեմնեան զիանահանները:

Այս պէտք է ասել, որ այդ բոլոր պատմութիւններն էլ վարդապետական նշանակութիւն ունին: Ահա մի հայեցակէտ որ վիճաբանութեան ժամանակ անարդար կերպով յաճախ մուսուլման է արւում, թէպէտ և նա համապատասխան է հնագոյն պատմողների ըմբռնման և այն իմաստին, որով հին ուսուցիչներն այդ պատմութիւնները դործ էին անում. գլխաւորն է այն հոգեւոր բովանդակութիւնը, որ դոցա մէջ ի նկատի է առնւում: Եթէ նորա այդ բաներից մէկն իբրև պատմական իրողութիւն են պաշտպանում, նորա իտպապէս պաշտպանում են այն հաւատալիքը, որ նորա հետ կապուած է: Ընկալ ի Հաբուսի Սրբոյ, առելու հետ միաժամանակ քարոզում է Յիսուս Քրիստոսի աստուածորդի լինելը. իւր համբարձումն աւետելու հետ քարոզում է, թէ նա կենդանւոյն չօր մօտ է և իշխում է:

Սորանից հետեւում է դատ-դատ արտաքին իրողութիւններին նաև մի այլ նշանակութիւնը կրօնի համար, որ վերջի-շեւալին մօտ և նման է: Այդ իրողութիւնները հաւատի համար եղել են նայնն, ինչ որ ձողն է սրբի համար և համ պատասպարող ծածկը քննոյշ տունիկի համար: Սորա են նորան զիբբ և ուղղութիւն առել, ինչպէս և իւր անելութիւնը քամուց և վատ եղանակից պաշտպանել: Եւ այն դործն, ինչ որ սորա մի ժամանակ կատարել են, շատերի համար դեռ այսօր էլ կատարում են: Գծաւարութիւնը միայն նորանումն է, որ մէկի հաւատը դեռ կարօտ է մի ամուր գուազանի և համ մի պատըսպարող յարկի մինչդեռ այս գուազանը մի աւրիշի ձեռքին փշրւում է և նորա հաւատն աւողջ է լոկ այն ժամանակ, երբ արևի լուսոյ ազատութիւնն է վայելում: Եւ վերջապէս շատ բան և ամենից աւելի սրտառուչն, ինչ որ մեզ նոր Ատակաբանն իբրև պատմութիւն է հաղորդում, ասում է մի լոկ մեզ ուսուցանելու համար, այլ իւր որոշ ձեռով ունի նաև սեմբոլական նշանակութիւն:

Ինձ յայտնի չէ մի գլխաւոր պատմութիւն, որի նկատմամբ այս ձեռք չլինէր: Կոյն այն շոգին, որ մի աստուածային կեանքի զօրութիւնն ու փառքը քոյի տակից հանելով մեր աչքի առաջ է դրել, որչափ մենք իբրև մարդ այդ ըմբռնել կարող ենք,—նա ճշմարտութեան համար իմաստալից զոյցից և սրտառուչ բանաստեղծութիւնից ևս հիւսել է մի նուրբ քոյ և նոյն այդ ճշմարտութիւնը նաև պատկերներով ու առակներով մատչելի դարձրել: Աստուած իրողութիւնների այս բազմազան

Նշանակութիւնը յայտնի է դառնում ամեն մէկին, ով որ քրիստոնէութեան պատմութեան մասին քաց աչքով և համեստ կերպով մտածում է: Այն ի հարկէ առանց վտանգի չէ. ինչպէս որ մի կողմից հեշտ է մոլորութեան մէջ ընկնել, իւր սեպհական միտքը պատմութեան վերագրել, ձուլն ու տունին իրար հետ շփոթել և ճգնաժամ յառաջ բերել, միւս կողմից էլ նա կարող է ջլատել պատմութեան և անձնաւորութեան ոյժն իրբև իսկական պատմութեան և անձնաւորութեան ոյժ: Այն ինչ՝ այն դժուարութիւնները՝ որոնք այստեղ ծագում են, ո՛չ մենք ինքներս ենք յառաջ բերել և ո՛չ էլ կարող ենք մեր ուժով վերացնել: Մեզ կըմնայ ապաւինել Աստուծոյ ղեկավարութեան, որ զիտէ, թէ մեզ ինչ է պէտք. քարոզենք մաքուր խղճով և շիտակութեամբ սոյն. ինչ որ մենք ինքներս ենք ստացել:

Ես վերջացրի իմ քացաթուփիւնն այս խնդրի մասին: Քրիստոնէութիւն և պատմութիւն. իմ ցանկութիւնն էր լուսաբանել լսի խնդրի իմաստն ու լրջութիւնը և մի քանի հայեցակէտներ առաջարկել իւր կշռադատութեան համար: Գուցէ դուք այլ բան էիք սպասում այս դասախօսութիւնից, գուցէ դուք ցանկութիւն ունէիք լսելու, ի՞նչ փոփոխութիւններ է ենթարկուել քրիստոնէութիւնը պատմութեան ընթացքում և ի՞նչ բարեքնել է սխուել նա իւր շուրջը: Բայց իսկապէս ծանօթանալ այն հիմնական խնդրին, թէ ի՞նչ չափով են շաղկապուած կրօնն ու պատմութիւնն իրար հետ, աւելի կարևոր է, քան մնացեալ բոլոր հարցերը: Զուտ քրիստոնէական հաւատք բնաւ երկիւղ չունի ո՛չ մի լուրջ քննութիւնից: Նորա համար ամենի է ամեն մի խիտ և կարգաբանեալ հետազոտութիւն այն իրողութիւններէ, որոնք պատմականորէն նորա հիմքն են կաղմում, այն, նա մինչև անդամ պարտք ունի հէնց իւր իսկ օգտի համար նոցա օժանդակելու. զի նորան յարակից չէ Պիղատոսի հարցը «Ի՞նչ է ճշմարտութիւնն», այլ ճշմարտութիւնը ճանաչելը իւր կոչումն ու խոստումն է:

Ներսէս արքայ Տէր-Միքայէլիան.

